ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՂԵՒՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՇՄԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԹԻՒ

Կարնոյ Պատրիարքական փոխ. Ղեոնդ եպ. Շիշմանեանի մի նամակը հրատարակուեց սրանից մի քանի ժամանակ առաջ «Արձագանք»-ում և թէ «Արևելք»-ում [1]), «Նոր-Դար» թերթը նոյնպէս արտատպեց եպիսկոպոսի նոյն նամակը plus խմբագրական ծանօթութեամբ, Որովհետև այդ նամակում վիշատակուած է իմ անձնաւորութիւնը, գլխաւորապէս իմ անձնականս է վերաբերում, ուստի հարկ եմ համարում «Մուրճ»-ի միջոցով լուսաբանել խնդիրը և ինձ վրայ բարդուած մեղադրանքը վերացնել. Ես մի հերքում ուղարկեցի «Արձագանք»-ին, սակայն վերջինիս պատասխան խմբագիրը չը հրատարակեց, երևի ակնածելով և կամ թէ ակնկալելով մի օր ընտրուած լինել բացի Բրուսալից, Եգիպտոսից նաև Կարնոյ կողմից պատգամաւոր ապագայ կաթողիկոսական ընտրութիւններին. Խնդիրը կայանում է հետևեալում. Անցեալ տարի մայիս ամսին կաթողիկոսական ընտրութիւններից յետոյ՝ Երևանում, ի պատիւ տաճկահայ պատգամաւորների տրուած հացկերոյթին, ուր ներկայ էր նաև վերոյիշեալ նամակի սրբ. հեղինակը, ես խօսք առնելով ճառ արտասանեցի, որը և առիթ է տուել Նորին գերապատուութեան «Արևելք»-ում և թէ «Արձագանք»-ում հրատարակած իւր նամակում ինձ վերագրել այնպիսի յատկութիւններ, որոնցից ես բոլորովին զուրկ եմ. սրբազան հօր վկայութեամբ վերոյիշեալ հացկերոյթին ինձ թոյլ եմ տուել իբր «հակակրօն վարդապետութեանց» և «հակաեկեղեցական ամուսնական բարենորոգումների» խնդիրներ յարուցանել և պաշտպանել և թէ սրբազանը «չկրնալով հանդուրժել իմ խօսքերին պահանջում է որ դադարեցնեմ ճառս և վերջապէս լռեցնում է ինձ» և այլն և այլն. Պարտաւորութիւն եմ համարում հրապարակաւ յայտնել, որ վերոյիշեալ հացկերոյթին իմ ճառախօսութեանս ժամանակ ոչ մի «հակա եկեղեցական» և «հակա-կրօնական» խնդրի մասին ամենևին խօսք չէ եղել և թէ Նորին գերապատուութիւնը իրա-

---

[1]) Տես «Արձագանք» № 18 և «Արևելք» № 2690.

ունք ունենալով դադարեցնել խօսքս, ինձ չէ լռեցրել սակայն. ոչ թէ լռեցրել այլ բացի մի շշուկից, որ թիւրիմացութեան հետևանքներ էր, ուրիշ բան չեմ լսել և շարունակել եմ ճառս մինչև վերջ։ Արդարութիւնը վերականգնելու համար առաջ եմ բերում այստեղ իմ ճառիս համառօտ բովանդակութիւնը։ Ահաւասիկ՝ «Սրբ. հայրեր, լարգոլապատիւ պատգամաւորներ. ամբողջ սրտով ուրախ ենք ներկայ ընտրութիւնների հետևանքներով։ Այստեղ, այս սեղանին ոմանց արտասանած ճառերը ոգևորիչ են, այնքան ոգևորիչ, որ ոգևորութեան առարկան չէր կարող ամբողջապէս այդ լատկութիւնը ներկայացնել լուրջ, դրական կերպով մտածողների համար։ Բաւական չէ ոգևորուել միայն հին աւերակներով, հին վանքերի բեկորներով. նրանք անցեալին են պատկանում. թողնենք նրանց հնադէտներին ուսումնասիրել։ Այլ սակայն ոգևորուել պէտք է ուրիշ գաղափարներով—այն է կենդանի աւերակները, կենդանի մարդկանց աւերեալ միտքն ու սիրտը վերականգնելու զգացմունքներով։ Մեր այդ զգացմունքների մարմնացումը պիտի հանդիսանայ Նորընտիր կաթողիկոսը։ Կաթողիկոսի որպիսի անձնաւորութիւն լինելը շատ մեծ նշանակութիւն ունի մանաւանդ մեր ժողովրդի նման մի հասարակական օրգանիզմի զարգացման համար. որովհետև նրա իրաւասութեան ներքոյ լուծումն են ստանում այնպիսի հասարակական խնդիրներ, ինչպէս են ամուսնական և դպրոցական խնդիրներ, որոնք կարօտ են կանոնաւորութեան։ Ցանկալի, շատ ցանկալի էր Նորընտիր կաթողիկոսի շուրջը հաւաքած տեսնել հոգևորականներից և ուսուցիչներից—մանաւանդ այդ երկու դասակարգերից լաւագոյն ոյժերը, առանց որոց չափազանց դժուար կը լինէր ժողովրդի բազմատեսակ կարիքներին բաւականութիւն տալ։ Այդ լաւագոյն ոյժերի, արժանաւոր հոգևորականների և արժանաւոր ուսուցիչների կենացն եմ առաջարկում և ալն»։

Այլ ևս աւելորդ են կոմենտարիաներ։ Հարկ եմ համարում լիշել և այն, որ գերապատիւ Շիշմանեան եպիսկոպոսը [1]) սոյն ուսումնական տարուայ սկզբներում անդադար ինձ հեռագիրներով հրաւիրում էր Էրզրում աղղալին հոգևոր դպրոցների համար տեսչի պաշտօնով. այդ իրողութիւնը ինձ համար անբացատրելի է մնում, որ անշուշտ պէտք է տեղի ունենար, մինչդեռ Նորին գերապատուութիւնը իմ անձնաւորութեան մասին արդէն աննպաստ կարծիք էր կազմած...

Մի երկու խօսք ևս «Նոր-Դար»-ի խմբ. ծանօթութեան մասին։

Այդ թերթը, որի միակ արժանաւորութիւնն է տգիտութիւն պաշտպանելը, զարմանալի չէ ուրեմն, որ սովորաբար լցնում է իւր էջերը

---

[1]) Չեմ մոռանում լսելու, որ անձամբ ևս ծանօթացել էինք Երևանի թեմական դպրանոցում.

սոյն օրինակ ծանօթութիւններով և անհեթեթ գրուածքներով։ Չը գիտեմ կա՞յ արդեօք երկրագնդի երեսին դարձեալ մի այնպիսի թերթ, ինչպէս «Նոր-Դար»-ն է մեզանում։ Սակայն եւրոպական մամուլի մէջ ինձ ծանօթ բազմաթիւ թերթերի մէջ չյայտնի է «Ultramontain» կոչուած և «Armée de salut» կրօնական աղանդի օրգանների գոյութիւնը, որոնց համանմանութիւնը իրօք որ ունի «Նոր-Դար»-ը։ Սա առաջիններին յատուկ հոտառութեամբ և ընդունակութեամբ որոնում է, գտնում իւր չարաննենգ նպատակները առաջ տանելու համար թէ որտեղ ով և ինչ կայ։ Նրանց պէս սա էլ ներս է սողում և խառնւում (s'immiscer) ամեն տեսակ խնդիրների և շրջանների մէջ։ Դուք ձգտում էք կրթական մոնոպոլիա ստեղծել, հայ ժողովրդի կրթարանները լցնել ձեր մարդիկներով, այդ միենոյն նպատակին ծառայելու միտք չէ արդեօք խմբագրական ծանօթութեան մէջ յիշում էք, որ ես «այժմս Շուշուայ հոգևոր դպրանոցի ուսուցիչ» եմ, մի հաստ գիծ էլ քաշելով հոգևոր բառի տակ?!

ԳԷՈՐԳ ՂԱՐԱՋԵԱՆՑ։